ԶԱՔԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՆ ԻԼԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆՈՒՄ

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Մանգուին մոնղոլական պետության մեծ խան ընտրելու կապակցությամբ 1251 թ. Կարակորումում կայացած կուրալթայում որոշվել էր ամբողջացնել Իրանի գրավումը և նվաճել դրան հարակից երկրները: Այդ նպատակով Մանգուի (1251–1259) եղբայր Հուլավուի գլխավորությամբ առանձնացվեց մի խոշոր բանակ, որը 1256 թ. հունվարին մտավ Իրան: Տեղ հասնելով, Հուլավուն անմիջապես հինգ վիլայեթներից կազմված մոնղոլական կուսակալության գերագույն իշխանությունը վերցրեց իր ձեռքը և ձեռնամուխ եղավ իսմայիլիտների պետության վերացմանը: Դա ավարտվեց նույն թվականի դեկտեմբերի 15-ին՝ այդ պետության կենտրոն Ալամութի գրավմամբ, որով Իրանի նվաճումն ավարտվեց: Իսմայիլիտների դեմ կռվելիս Հուլավուի զորքի պարենամթերքը բերվում էր նաև Հայաստանից[1]:

Ամբողջ Իրանին տիրելով՝ Հուլավուն 1256 թ. հիմնեց մի նոր պետություն, որը դարձավ մոնղոլական տերության հինգերորդ ուլուսը: Այն պաշտոնապես ճանաչվեց 1261 թ.՝ Հուլավուի եղբայր, մեծ խան Խուբիլայի (1259–1294) կողմից: Այս ուլուս-պետությունը, որը մոնղոլական և տեղական, գերազանցապես իրանական, պետականության ձևերի ու ավատատիրական ինստիտուտների համակցություն էր[2], իր հիմնադրի ու նրա ժառանգորդների իլխան (ցեղի խան) տիտղոսի անունով կոչվեց Իլխանություն և միայն ձևականորեն էր ընդունում մեծ խանի գերիշխանությունը:

Երբ Հուլավուն 1257 թ. ամռանը Քազվինից շարժվում էր Համադան, նրան ընդառաջ գնաց արդեն նախկին կուսակալ Բաչու նոյինը: Իլխանը նրան զայրացած ընդունեց՝ մեղադրելով նվաճումներում թերանալու մեջ[3]: Նա հրամայեց, որ Բաչուի գլխավորած զորքերն անհապաղ «թողուլ զերկիր կալուածոյ բնակութեան իւրեանց՝ զՄուղան և զաշխարհն Ադուանից և զՀայոց և զՎրաց»[4], շարժվեն արևմուտք և նվաճեն մինչև Միջերկրական ծով ընկած շրջանները, այսինքն Իկո-

---

[1] Р а ш и д а д - Д и н. Сборник летописей (*այսուհետև՝* Р а ш и д а д - Д и н), т. III. М.–Л., 1946, с. 30–31; *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի. Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի* (*այսուհետև՝ Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի*), *Երևան, 1961, էջ 376, Հաւաքումն պատմութեան Վ ա ր դ ա ն ա յ վ ա ր դ ա պ ե տ ի լուսաբանեալ* (*այսուհետև՝ Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ*), *Վենետիկ, 1862, էջ 149, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա. Հակոբյան, հ. I, Երևան, 1951, էջ 43, հ. II, Երևան, 1956, էջ 142,* Картлис цховреба. Тбилиси, 2008, с. 358, 360–361.

[2] И. П. П е т р у ш е в с к и й. Земледелие и аграрные отношения в Иране XIII-XIV веков. М.–Л., 1960, с. 47.

[3] Р а ш и д а д - Д и н, с. *32.*

[4] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 377,* Р а ш и д а д - Д и н, с. 33.

նիայի սելջուկյան սուլթանությունը[5]: Թեև Բաչուն ու նրան ենթակա զորահրամանատարները դժվարանում էին թողնել իրենց հարմարավետ բնակատեղիները, Հուլավուից երկյուղելով ստիպված էին կատարել հրամանը[6]: Նույն՝ 1257 թ. Բաչուն զորքով մտավ Իկոնիայի սելջուկյան սուլթանություն: Նա Քյոսե-դաղում ջախջախելով սուլթան Իզզ ադ-Դին Քեյ Քավուզ II-ի (1246–1257) բանակը, գրավեց նրա սուլթանությունը՝ այն ենթարկելով կողոպուտի, կոտորածի ու ավերածության: Այս արշավանքի ժամանակ Կիլիկյան Հայաստանի Հեթում Ա թագավորը (1226–1270) զորքով աջակցեց Բաչուին, որը «թուղթ գոհութեան և գովութեան գրեալ վասն նորա առ Հուլաւուն»[7]: Բաչուի զորքերն ի թիվս այլ քաղաքների, գրավեցին ու կողոպտեցին Կարինը և բնակչության մի մասին սրատեցին[8]: Այդ ընթացքում մոնղոլ զորավարներից Խուլը «կոխեաց անողորմաբար զտառապեալ քրիստոն[ե]այսն»՝ տանջելով ու սպանելով բազմաթիվ քահանաների, մասնավորապես Գերեթին վանքի վանահայր Ստեփանոսին, իսկ Ղատաղա խանն ասպատակեց Երզնկան ու Կամախը[9]:

Հուլավուն դեռ Իրան չհասած, յառլիկներ էր ուղարկել մոնղոլների ենթակայության տակ գտնվող երկրների, այդ թվում Վրացական թագավորության տիրակալներին՝ պահանջելով իրեն զորքով, զենքով ու պարենով աջակցել, հակառակ դեպքում սպառնալով նրանց զրկել զորքից, տիրույթներից և այլ ունեցվածքից[10]: Այդ իսկ պատճառով Հուլավուին ընդառաջ գնալիս, Բաչու նոյինն իր հետ տարել էր նաև վրաց Ուլու Դավիթ թագավորին (1246–1271) և հայ ու վրաց ավագանու երևելիներին: Ի տարբերություն Բաչուի, Հուլավուն նրանց սիրալիր ընդունեց[11]: Հայկական սկզբնաղբյուրները դա բացատրում են քրիստոնյաների նկատմամբ Հուլավուի ջերմությամբ և նրա կին Տոնդուզ խաթունի քրիստոնյա լինելով[12]: Իրականում քրիստոնյաների (նաև էթնիկական ու կրոնական փոքրամասնությունների) նկատմամբ Հուլավուի բարեհաճությունը, որն արձանագրել է նաև Ռաշիդ ադ-Դինը[13], պատճառաբանվում է այն իրողությամբ, որ նա վերջիններիս դիտում էր իբրև մողոլների հիմնական թշնամի մահմեդականների (հատկապես սյունի) դեմ պայքարում դաշնակցի: Ուստի, հայ և վրաց ավագանիներին սիրաշահելով, Հուլավուն ջանում էր ապահովել նրանց հավատարիմ ու ջանադիր ծառայությունը գալիք մարտերում:

---

[5] Р а ш и д а д - Д и н, с. 33; *Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 141:*

[6] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 375, Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 149:*

[7] *Այս արշավանքի մասին տե՛ս* Р а ш и д а д - Д и н, с. 33; *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 375-376, Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 149, Մանր ժամանա կագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 43, հ. II, էջ 141-142,* Р. Г у с е й н о в. Сирийские источники XII–XIII вв. об Азербайджане. Баку, 1960, с. 76.

[8] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 375:*

[9] *Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի. Պատմութիւն թաթարաց (այսուհետև՝ Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի), Երուսաղեմ, 1974, էջ 38-39, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 43, հ. II, էջ 142:*

[10] Р а ш и д а д - Д и н, с. 25.

[11] Картлис цховреба, с. 359.

[12] *Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 149, Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի, էջ 45, 46:*

[13] Р а ш и д а д - Д и н, с. 27, 41.

Որ, իրոք, Հուլավուն հասավ իր նպատակին, երևում է Գրիգոր Ակներցու հետևյալ տողերից. «յոյժ սիրէր Հուլաւու Ղանն զզաւրքն Հայոց եւ Վրաց. վասն կարի քաջութեան իւրեանց, զոր առնէին առաջի նորա յամենայն պատերազմունս, վասն որոյ Բահադուրս անուանեաց զնոսայ. զի զգեղեցիկ եւ զերիտասարդ որդիս մեծ իշխանացն Հայոց և Վրաց ընտրեաց եւ կացոյց դռնապանսն իւր»[14]: Մոնղոլների ռազմական ձեռնարկումներին մասնավորապես հայ իշխանների եռանդուն մասնակցությունը ստիպողական լինելուց զատ, բացատրվում է նրանով, որ ի թիվս հպատակ այլ ժողովուրդների վերնախավի ներկայացուցիչների, դա եթե ոչ բարձրացման, ապա գոնե ունեցած դիրքերի ու կալվածքների պահպանման կարևորագույն միջոց էր:

Հուլավուն 1258 թ. փետրվարի 4-ին գրավեց Բաղդադը և կործանեց Աբասյան խալիֆայությունը: Ռազմական գործողություններին եռանդուն մասնակցեց հայ-վրացական իշխանազորը [15]: Հայ իշխաններից հատկապես աչքի ընկան ամիրսպասալար Շահնշահի ավագ որդի Զաքարեն և Վասակ Խաղբակյանի տղա Հասան-Պռոշը [16]: Պատահական չէ, որ վերջինս ընդգրկվել էր այն դեսպանության կազմում, որին Հուլավուն ուղարկել էր Բաղդադ՝ Աբասյան վերջին խալիֆ Մութասիմի մոտ, առաջարկելով հանձնվել[17]: Սակայն Մութասիմը մերժեց, ուստի Բաղդադը գրավվելուց հետո սպանվեց: Քաղաքը մի քանի օր հիմնովին կողոպտվեց ու գրեթե ամբողջությամբ հրկիզվեց, իսկ բնակչությունը, բացառությամբ քրիստոնյաների ու հուդայականների, գրեթե ոչնչացվեց[18]:

Հյուսիսային Միջագետքը գրավելու նպատակով Հուլավուն 1258 թ. գարնանն այնտեղ ուղարկեց նոր զորքեր՝ իր որդիներից Իշմութի գլխավորությամբ [19]: Այս բանակը որոշ նվաճումներից հետո պաշարեց Մուֆարզին (Տիգրանակերտ) քաղաքը, որը մոնղոլների սպասածին հակառակ, կատաղի դիմադրեց: Երբ Մուֆարզինի պաշարումը երկարեց, Հուլավուն Չաղաթայ անունով մի զորավարի գլխավորությամբ նոր զորք ուղարկեց: Այս զորքի կազմում գործող հայ-վրացական զորամասերը գլխավորում էր Հասան-Պռոշը[20]: Մոնղոլներին հաջողվեց Մուֆարզինը գրավել մոտ երկու տարվա պաշարումից հետո՝ 1260 թ. գարնանը, այն էլ մեծ կորուստների գնով: Մուֆարզինի համար մղված կատաղի կռիվներում «քաջապես մարտուցեալ» սպանվեց Զաքարե ամիրսպասալարի ու Իվանե աթաբեկի քույր Դոփի թոռ Սնադա Խաչենցին՝ «որդի մեծ իշխանին Գրիգորի»[21]: Չի բացառվում, որ հենց նա է Ռաշիդ ադ-Դինի հիշատակած այն «վրացական ազնաուրը»,

---

[14] *Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի, էջ 47:*

[15] Картлис цховреба, с. 362–363.

[16] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 380:*

[17] *Նույն տեղում: Հմմտ.* Р а ш и д а д - Д и н, с. 34–35.

[18] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 381-383, Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 150, Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի, էջ 41-42,* Картлис цховреба, с. 362–363; Р а ш и д а д - Д и н, с. 44–45.

[19] *Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 152, Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 385,* Р а ш и д а д - Д и н, с. *54.*

[20] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 385:*

[21] *Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 152:*

որն, ըստ պատմիչի, ի զորու էր միայնակ զորք ջախջախել և խիզախաբար ընկավ պաշարման առաջին օրերին՝ քաղաքի պարիսպների տակ մարտում[22]:

Այս ընթացքում՝ 1259 թ. հոկտեմբերի 12-ին, Այուբյաններին պատկանող Ասորիքը և Հյուսիսային Միջագետքը լիովին նվաճելու նպատակով Հուլավուն մեծ բանակով՝ հայ-վրացական ուժերի և Հեթում Ա-ի ու նրա զորքերի հետ արշավեց այնտեղ: 1259 թ. վերջերին գրավվում է Այուբյանների նստավայր Հալեպը[23]: Այս քաղաքի ամրոցի գրավման համար մղված 40-օրյա մարտերում հատկապես աչքի ընկավ ու վիրավորվեց իշխան Սադուն Մահկանաբերդցին՝ քաջության համար արժանանալով Հուլավուի բարեհաճությանը[24]: Թերևս դրանով է բացատրվում, որ Սադունն այս արշավանքի ժամանակ ոչ միայն դարձավ մոնղոլների ու որոշակի պայմաններով նրանց հպատակվելու պատրաստակամություն հայտնած սասունցիների բանակցությունների միջնորդը, այլև ի կառավարումն ստացավ Սասունը: Սակայն մոնղոլները «յետոյ ստեցին երդումն» և ուխտադրժաբար ներխուժելով Սասուն, կոտորեցին բազմաթիվ սասունցիների[25]: Մոնղոլները 1260 թ. կեսին տիրացան Ասորիքի մի շարք բնակավայրերի՝ դրանց բնակչությանն իրենց բնորոշ դաժանությամբ ենթարկելով կողոպուտի ու զանգվածային ոչնչացման: Այս առումով ուշագրավ է Ռաշիդ ադ-Դինի վկայությունն առ այն, որ Խարիմ բերդի բնակիչներից միայն մի հայ ոսկերիչ էր փրկվել[26]:

Հուլավուն ծրագրել էր այնուհետև շարժվել դեպի Պաղեստին և այն հպատակեցնելուց հետո ջախջախել հեթանոս-շամանական մոնղոլների ու քրիստոնյաների դեմ պայքարում Բաղդադի Աբասյան խալիֆայության կործանումից հետո իսլամական աշխարհի դրոշակակրի դերն ստանձնած Եգիպտոսի մամլուքյան սուլթանությունը: Սակայն մեծ խան Մանգուի՝ խոլերայից մահվան (1259 թ. օգոստոս) լուրն առնելով նա ռազմական գործողությունները դադարեցնում է և վերադառնում Խլաթ, որտեղ հասնում է 1260 թ. հունիսի 6-ին: Նախքան այդ, նա Ասորիքում իր տեղապահ և այնտեղ թողած 20 հազարանոց զորքի հրամանատար է նշանակում նեստորական քրիստոնյա մոնղոլ զորավար Քեթբուղա նոյինին: Երբ վերջինս շարժվում է Երուսաղեմ, Եգիպտոսի մամլուքյան սուլթան Մուզաֆֆար Սեյֆ ադ-Դին Կութուզը նրա առաջխաղացումը կասեցնելու նպատակով իր դաշնակիցների հետ մեծ զորքով մտնում է Պաղեստին և 1260 թ. սեպտեմբերի 3-ին Թաբորական լեռան մոտ գտնվող Այն-Ջալուտի հովտում կայացած ճակատամարտում մոնղոլներին գլխովին ջախջախում: Թե՛ մոնղոլները և թե՛ ճակատի առաջին գծում մարտնչող հայ-վրացական զորամասերը մեծ կորուստներ են կրում, իսկ

---

[22] Р а ш и д а д - Д и н, с. 54.

[23] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Ս. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 297,* Р а ш и д а д - Д и н, с. 49–50.

[24] Р а ш и д а д - Д и н, с. 49-50. *Հմմտ. Սամուէլի քահանայի Ա ն ե ց ւ ո յ Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 151 և ուրիշներ: Սադուն Մահկանաբերդցու մասին տե՛ս Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. Մահկանաբերդցիների (Սադունեանների) իշխանական տունը ԺԲ-ԺԴ դարերում.– «Հայկազյան հայագիտական հանդես», հ. ԺՀ, Բեյրութ, 1998, էջ 9-40:*

[25] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 386:*

[26] Р а ш и д а д - Д и н, с. 50.

Քեթբուղան գերվում է ու սպանվում[27]: Դրանից հետո Կութուզը տիրանում է Ասորիքի մեծ մասին:

Այս ծանր պարտությունից հետո դեպի հարավ Իլխանության ընդարձակմանը վերջ տրվեց, չնայած Հուլավուի հաջորդները չէին դադարեցնում ամբողջ Ասորիքի ու Պաղեստինի գրավման փորձերը: Այսպիսով՝ Հուլավուի ստեղծած պետության մեջ մտնում էին Աղվանստանի արևմտյան մեծ մասը, Իրանը, Ատրպատականը, Աղվանքը, Շիրվանը, Հայաստանը, Արևելյան Վրաստանը, Հյուսիսային Ասորիքը, Փոքր Ասիայի արևելյան շրջանները (Ռում) և, իբրև ստորակա պետություններ՝ Արևմտյան Վրաստանը, Տրապիզոնի կայսրությունը, Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Կիլիկյան Հայաստանը և Ասորիքում ու Կիպրոսում խաչակրաց տիրույթները:

Իլխանության ստեղծումից հետո էլ Զաքարյան Հայաստանը շարունակեց մնալ Գյուրջիստանի վիլայեթի կազմում: Գյուրջիստանի վիլայեթում ներառված իրենց իշխանությունների վարչատնտեսական, ֆինանսահարկային ու դատական համակարգը մոնղոլական պաշտոնեության հսկողությամբ տնօրինում էին տեղական իշխողները: Վիլայեթի մեջ մտնող թվով հինգ հայկական թումաններն առաջվա պես գլխավորում էին ամիրսպասալար Շահնշահի որդի Զաքարեն, աթաբեկ Ավագի կին Գոնցան, Աղբուղա Վահրամյանը, Սմբատ Օրբելյանը և Հասան-Ջալալը: Նրանք համապատասխանաբար իշխում էին «Շահնշահյան» ու «Ավագյան» տների և Վահրամյանների տիրույթներում, Սյունիքում ու Ներքին Խաչենում: Զաքարյան Հայաստանում մինչև 1250-ական թվականների սկիզբն անսասան գերիշխող Զաքարյան իշխանական տան դիրքերի թուլացումն այդ տասնամյակի վերջերին իրեն ավելի զգալ տվեց: Դրա պատճառն ինչպես Զաքարյանների երկու գլխավոր ճյուղերի՝ Շահնշահյանների ու Ավագյանների ներհակություններն էին, այնպես էլ «Ավագյան տան» տիրույթների նկատմամբ Ուլու Դավթի հավակնությունները և, ի հակակշիռ Զաքարյանների, այլ իշխանական տներ հզորացնելով իրենց իշխանությունն ամրապնդելու մոնղոլների ուղեգիծը:

«Ավագյան տան» տիրույթները վրաց արքունապատկան ոստանի մեջ ներառելու նպատակով Ուլու Դավիթը 1257 թ. վերջերին ամուսնացավ աթաբեկ Ավագի այրի Գոնցայի հետ[28]: Արու զավակից զուրկ, և միայն Խոշաք անունով չափահաս դուստր ունեցող վրացուհի Գոնցան իր հերթին այդ քայլին դիմեց Սմբատ Օրբելյանի ոտնձգություններին ու Ավագի ժառանգության նկատմամբ «Շահնշահյան տան» հավակնություններին վերջ տալու միտումով: Մոր ամուսնության հետևանքով հայրական կալվածքներից փաստացի զրկված Խոշաքի խնամակալությունն Ուլու Դավիթը հանձնեց ֆիզիկական ու մտավոր մեծ ունակություններով օժտված և ճարտասանությամբ ու լեզուների իմացությամբ հայտնի Սադուն Մահկանաբերդցուն՝ այդ ժամանակ դեռ Մահկանաբերդի համեստ տիրոջը[29]: Բնականա-

---

[27] *Նույն տեղում, էջ 50-53, Կիրակոս Գանձակեցի, էջ 388-389, Վարդան վարդապետ, էջ 152, Մխիթարայ Այրիանեցւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Մխիթար Անեցի), Մոսկվա, 1860, էջ 68, Սմբատայ Սպարապետի Տարեգիրք, Վենետիկ, 1956, էջ 222, Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. II, էջ 70 և այլն:*

[28] Картлис цховреба, с. 365.

[29] *Նույն տեղում:*

բար, Խոշաքի ամուսնությունը հանգեցրեց նրա ու դստեր հարաբերությունների սրմանը և Զաքարյան իշխանական տան էական թուլացմանը: Փոխարենը, սկսվեց Սադունի շեշտակի վերելքը: Իր հերթին, դիրքերն ավելի ամրապնդեց ամենազոր բաղաղ Արղունի հովանավորությունից զատ Հուլավուի բարեհաճությանն արժանացած Սմբատ Օրբելյանը[30]*:*

Սակայն շուտով տեղի ունեցավ մի կարևոր իրադարձություն, որը մոնղոլները Գյուրջիստանի վիլայեթի, մասնավորապես Զաքարյան Հայաստանի վերնախավում ուժերի նոր, իրենց համար առավել նպաստավոր հարաբերակցություն ստեղծելու առիթ ծառայեցրին: Դա Ուլու Դավթի գլխավորած 1259–1261 թթ. հայ-վրացական հակամոնղոլական ապստամբությունն էր, որին առավել գործուն մասնակցեց վրացական ավագանու մի հատվածը: Բանն այն է, որ չնայած մոնղոլների ռազմական ձեռնարկումներին թագավորի և հայ ու վրաց իշխանների մասնակցությունը հպատակության կարևոր պայմաններից էր և, ինչպես նշվեց, դիրքերի ու տիրույթների եթե ոչ մեծացման, ապա գոնե պահպանման էական միջոց, կապված էր ոչ միայն մեծ զրկանքների ու դժվարությունների, այլև կյանքը հանուն օտար տիրողի կորցնելու իրական վտանգի հետ: Այս ամենը, չնայած ռազմավարից մասնաբաժին ունենալուն[31]*, հարուցում էր հայ-վրացական ավագանու խուլ դժգոհությունը: Դա մասնավորապես դրսևորվեց 1258 թ. դեպի Հյուսիսային Միջագետք Հուլավուի վերոհիշյալ արշավանքի ընթացքում: Ուլու Դավիթն ու արշավանքին մասնակից հայ և վրաց իշխանները վաղուց ռազմարշավների մեջ լինելու պատճառաբանությամբ Հուլավուից տուն վերադառնալու թույլտվություն խնդրեցին, և վերջինս բավարարեց նրանց խնդրանքը*[32]*:*

Մոնղոլական ռազմարշավներին ստիպողական մասնակցության հարուցած խուլ դժգոհությանը հավելվեց բաղաղ Արղունի կատարած 1254 թ. աշխարհագրի հետևանքով հարկերի ծանրացման դեմ սուր բողոքը: Կիրակոս Գանձակեցու վկայությամբ «թագաւորն վրաց Դաւիթ՝ որդի Լաշային, որ կայր ի հնազանդութեան թաթարին, նեղացաւ, ձանձրացաւ ի բազում հարկապահանջութեանցն, որ նեղէին զնա և՛ զամենայն իշխանսն, և՛ զամենայն աշխարհս անհնարին ծանրութեամբ, զոր ոչ կարէին բառնալ»[33]*: Ուլու Դավթին հատկապես զայրացրել էին պարսիկ վաճառական Խոջա Ազիզի՝ Արղունի օգնականի, հարկային չարաշահումները, որոնք շոշափում էին նրա նաև անձնական շահերը*[34]*: Ըստ Աթա Մալիք Ջուվեյնու, նրանից նաև պահանջվել էր մարել հարկային ապառքները*[35]*:*

Ջուվեյնու համաձայն՝ Հուլավուի դեմ նախքան այդ ընդվզել էր Ուլու Դավթի զահակից Դավիթ Նարինը՝ նրա հորաքույր Ռուսուդան թագուհու որդին: Չնայած Դավիթ Նարինին բռնելու և ընդվզումը ճնշելու համար Հուլավուն Արղունի հրա-

---

[30] *Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Ստեփաննոսի Օրբէլեան արքեպիսկոպոսի Սիւնեաց (այսուհետև՝ Ստեփաննոս Օրբելյան), Թիֆլիս, 1910, էջ 414:*

[31] Картлис цховреба, с. 364.

[32] *Նույն տեղում:*

[33] *Կիրակոս Գանձակեցի, էջ 389:*

[34] Картлис цховреба, с. 365–366.

[35] The History of the World-conqueror by Ala-ad Din ata-Malik Juvaini (*այսուհետև՝* Juvaini), vol. II. Manchester, 1958, p. 525.

մանատարությամբ մոնղոլներից ու մահմեդականներից կազմված մեծ ուժեր էր ուղարկել, նրան հաջողվել էր խույս տալ: Արղունը նրան հետապնդելիս շատերին սպանել, բազմաթիվ գերիներ էր վերցրել ու հետ դառնալով՝ 1259 թ. սեպտեմբերի սկզբին Թավրիզում միացել դեպի Ասորիք ու Հյուսիսային Միջագետք արշավանքի պատրաստվող իլխանին: Երբ նա Հուլավուին ներկայացնում է Գյուրջիստանի վիլայեթում տիրող վիճակը, վերջինս նրան 20 հազարանոց հեծյալ զորք է տրամադրում, որպեսզի այնտեղից հավաքի չվճարված հարկերը[36]:

Ըստ վրաց հեղինակի, երբ Հուլավուն 1251 թ. «որոշեց Մսերքի սուլթանի դեմ (Ասորիք ու Հյուսիսային Միջագետք – Ա. Շ.*) զինավառ արշավել»[37], դրան մասնակցության կոչելով Ուլու Դավթին և հայ ու վրաց իշխաններին՝ վրաց արքան երկմտանքի մեջ ընկավ: Ի վերջո, չնայած արշավանքին մասնակցելու նախնական որոշմանը, Հուլավուի մոտ չհասած՝ Զավախքում, ըստ երևույթին լսելով չվճարված հարկերը գանձելու նպատակով Արղունի՝ զորքով Վրաստան շարժվելու լուրը, որոշեց չմասնակցել արշավանքին ու ապստամբել: Նրա մոտ կանչված հայ ու վրաց իշխանների մի մասը «նեղեալք և տառապեալք, ծախեալք և գրաւ եդեալ զքաղաքս և զգաւառս, և ոչ կարեցեալք յագեցուցանել զանյագսն ըստ նմանութեան չար տզրկացն»[38] որոշում են ապստամբել: Մյուսները վճռում են չապստամբել և մասնակցել արշավանքին, ինչպես, օրինակ, Շահնշահ ամիրսպասալարի որդի Իվանեին:*

Հավանաբար որոշած լինելով ապաստանել համեմատաբար անվտանգ Սամցխեում, Ուլու Դավիթն իր մոտ է կանչում այնտեղի սպասալար, իշխան Սարգիս Զաղելուն և համոզում ապստամբել: Ստանալով նրա համաձայնությունը, Ուլու Դավիթն անցնում է Սամցխե: Արղունի ձեռքն ընկնելուց նա այնքան էր տագնապում, որ աճապարելով Գոնցա թագուհուն ու նրանից ունեցած Դեմետրե նորածին որդուն իր հետ տանել չկարողան ալով թողնում է Բջնիում, որտեղ, անկասկած, գտնվում էր նաև Խոշաքը: Արղունը զորքով Թավրիզ–Պարտավ–Գանձակ–Հունարակերտ ճանապարհով հասնում է Սոմխիթ, իսկ այնտեղից մտնում Տփխիս: Նրան միանում են Ուլու Դավթին չհարած իշխանները: Չնայած վերջիններիս գործուն մասնակցությամբ Արղունին հաջողվում է կոտրել ապստամբների համառ դիմադրությունը, բայց չի կարողանում գերել Ուլու Դավթին: Վերջինս, ի վերջո, անցնում է Արևմտյան Վրաստան և ապաստանում Քութայիսում՝ Դավիթ Նարինի մոտ, իսկ մեկ տարի անց որոշակի պայմաններով գնալով Պարտավում գտնվող Հուլավուի մոտ՝ կրկին հնազանդվում է մոնղոլներին՝ մասնակցելով Ոսկե հորդայի խան Բերքեի դեմ իլխանի կռիվներին[39]: Կիրակոս Գանձակեցու համաձայն ապստամբությունը ճնշելիս Արղունն ասպատակեց «զբազում գավառս

---

[36] *Նույն տեղում, էջ 524-525:*

[37] Картлис цховреба, с. 365.

[38] *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 389: Չնայած բոլոր խավերի համար հարկերի անօրինակ ծանր լինելու մասին հայ-վրացական սկզբնաղբյուրների միահամուռ պնդմանը՝ Զուվեյնին դրանք աղքատների համար է ծանր համարում, իսկ ունևորների համար՝ թեթև* (J u v a i n i, vol. II, p. 524)*:*

[39] *Ապստամբության մասին տե՛ս* Картлис цховреба, с. 365–372; *Կ ի ր ա կ ո ս Գ ա ն ձ ա կ ե ց ի, էջ 389-390, Մ խ ի թ ա ր Ա յ ր ի վ ա ն ե ց ի, էջ 67,* J u v a i n i, vol. II, p. 525 *և այլն:*

վրաց կոտորեաց և գերեաց անխնայաբար»[40]: Հատկապես տուժեց ապստամբության կենտրոն հայաբնակ Սամցխեն: Մխիթար Այրիվանեցին իր հերթին նկատում է, որ մոնղոլները «քակեցին զամենայն բերդս և զամենայն ամուր եկեղեցիս զՀայոց, զՎրաց և զԱղուանից ի ձեռս Խոճազիզ (Խոջա Ազիզ – Ա. Շ.) տաճկին»[41]:

Երբ Արղունն ապստամբության բոլոր օջախները դեռ լիովին չճնշած, Հուլավուի հրամանով վերադարձավ նրա զորակայան, հարկերը մուծած չլինելու պատճառաբանությամբ իր հետ տարավ Գոնցային, Խոշաքին, Դեմետրեին, ինչպես նաև Շահնշահ Զաքարյանին, Հասան-Ջալալին և շատ այլ իշխանների, «յորոց բազում զանձս առեալ, հազիւ զերծան ի մահուանէ»[42]: Սակայն Հասան-Ջալալի հանդեպ անձնական թշնամանք տածող Արղունը հարմար պահն օգտագործելով Ներքին Խաչենի իշխանին ազատ չարձակեց: Նա Հասան-Ջալալին տարավ Ղազվին և հրամայեց տանջամահ անել: Դա կատարվեց 1261 թ.: Ընդ որում, Արղունն այնպես արեց, որ Հասան-Ջալալի դուստր Ռուսուդանը չհասցնի Տոնդուզ խաթունի միջնորդությամբ փրկել հորը[43]: Նույն թվականին Արղունի սադրանքով Հուլավուն հրամայեց խոշտանգելով սպանել նաև Շահնշահ Զաքարյանի որդի Զաքարե ամիրսպասալարին: Նա մեղադրվել էր ապստամբների հետ գաղտնի կապեր ունենալու, հարկեր չվճարելու և այլ մեղքերի մեջ: Եվ դա այն դեպքում, երբ նա մասնակցել էր ապստամբության ճնշմանը, իսկ հայրը, ինչպես տեսանք, վճարել էր հարկերը: Երբ Օձուն գյուղում գտնվող Շահնշահին առավ երիտասարդ որդու եղեռնական մահվան լուրը՝ վշտից հանկարծամահ եղավ[44]: Չխնայվեց նաև Գոնցան, որը ևս 1261 կամ, որ ավելի հավանական է, 1262 թ. Հուլավուի հրամանով սպանվեց[45]: Այսպիսով, Ուլու Դավթի ապստամբության և դրան հաջորդած անցքերի բերումով Գյուրջիստանի վիլայեթի հայկական հինգ թումաններից երեքը գլխատվեցին: Զաքարեի, Գոնցայի ու Հասան Ջալալի փոխարեն Հուլավուն նրանց թումանների գլուխ կարգեց Զաքարեի եղբայր Իվանեին, Գոնցայի դուստր Խոշաքին և Հասան Ջալալի որդի Աթաբեկին, որոնք զուրկ էին իրենց նախորդների քաղաքական կշռից ու հեղինակությունից: Դա, իր հերթին, հանգեցրեց Զաքարյան Հայաստանի ավագանու շարքերում ուժերի վերադասավորման ու հոգուտ Օրբելյանների՝ ի դեմս Սմբատ Օրբելյանի դրանց նոր հարաբերակցության: Չնայած խորամանկ և միջոցների միջև խտրություն չդնող Օրբելյան իշխանն իրենց նախկին սյուզերեն «Ավագյան տան» նկատմամբ առաջնության համար պայքարում հաջողության հասավ, նվաճողների աչքում նա հերթական ժամիշխան էր, որքան էլ Սյունյաց պատմիչը հորեղբոր հնարավորությունները չափազանցնելով պնդեր, թե նա Հուլավուի միջոցով «ում կամէր՝ մահ տայր ածել, և ում կամէր՝ կեանս

---

[40] *Կիրակոս Գանձակեցի, էջ 390:*

[41] *Մխիթար Այրիվանեցի, էջ 67:*

[42] *Կիրակոս Գանձակեցի, էջ 390: Հմմտ. Մխիթար Այրիվանեցի, էջ 687:*

[43] *Տե՛ս, օրինակ, Կիրակոս Գանձակեցի, էջ 390-391, Վարդան վարդապետ, էջ 152,* Картлис цховреба, с. 372; *Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 43, Մխիթար Այրիվանեցի, էջ 68 և այլն:*

[44] *Կիրակոս Գանձակեցի, էջ 392, 393, Վարդան վարդապետ, էջ 153,* Картлис цховреба, с. 372; *Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. I, էջ 43, Մխիթար Այրիվանեցի, էջ 68 և այլն:*

[45] Картлис цховреба, с. 372; *Ստեփանոս Օրբելյան, էջ 418:*

շնորհէր»[46]: Անշուշտ, Սմբատն ուժերի ներածին չափով դավով ու քսությամբ նպաստեց դեպքերի հօգուտ իրեն զարգացմանը: Սակայն, իրականում, նա Հուլավուի և Արղունի ձեռքում սոսկ գործիք էր Գյուրջիստանի վիլայեթում, մասնավորապես Զաքարյան Հայաստանում, ուժերի նոր և կայուն հարաբերակցություն ստեղծելով մոնղոլական տիրապետությունն է՛լ ավելի ամրապնդելու գործում: Եվ բնավ պատահական չէ, որ նվաճողներն ի հակակշիռ Սմբատի շուտով առաջ քաշեցին նոր ուժի՝ Օրբելյան իշխանին անձնական որակներով ոչնչով չզիջող, գուցե և գերազանցող Սադուն Մահկանաբերդցուն՝ Խոշաքի խնամակալին:

Ճիշտ է, իրավիճակի կտրուկ փոփոխության պատճառով, այն է՝ Ոսկե հորդայի խան Բերքեի հարձակմանը դիմագրավելիս Ուլու Դավթի զինուժն օգտագործելու շահեկանությունից դրդված՝ Հուլավուն նրան մահապատժի չենթարկեց, սակայն վրաց արքան վերջնականապես կորցրեց իլխանի վստահությունը: Այդ է պատճառը, որ նրան հաջողվեց Տփխիս վերադառնալ միայն 1265 թ. փետրվարի 8-ին Հուլավուի անժամանակ մահվանից հետո, այն էլ թախանձագին խնդրանքներով[47]: Նրա բացակայության ժամանակ Արղունն իլխանի հրամանով Գյուրջիստանի վիլայեթի քաղաքացիական կառավարումը 1261 թ. հանձնել էր մոնղոլական վերնախավի լիակատար վստահությունը վայելող հայ մեծահարուստներից մեկին՝ Սարավանի որդի պարոն Սահմադինին (Շնորհավորին)[48]: Վիլայեթի զինվորական հրամանատարությունը տրվել էր մոնղոլ Սահլաթուին[49]:

Զաքարյան Հայաստանի ավագանու շարքերում ուժերի վերադասավորումից առավելապես տուժեց «Շահնշահյան տունը»: Շահնշահյանները ոչ միայն ստիպված էին հրաժարվել «Ավագյան տան» տիրույթների նկատմամբ հավակնություններից ու կորցնել ամիրսպասալարությունը՝ բավարարվելով մանդատուրթ-ուխուցեսի ձևական դարձած պաշտոնով, այլև տնտեսական քայքայման ուղին բռնելով՝ մաս-մաս վաճառքի հանել տոհմային սեփականությունը: Այսպես՝ Շահնշահի որդիներից Արտաշիրը 1261 թ. Սահմադինին վաճառեց Անիի Բագրատունիների երբեմնի ամառանոց Մրենը[50]: Հետագայում «Շահնշահյանների տան» տնտեսական քայքայումը ոչ միայն չդադարեց, այլև խորացավ: Դրա վկայությունն է Սամվել Անեցու շարունակողի «ՌՄԿԷ (1267 – Ա. Շ.*): ԶՅանի ծախեցին Շահնշահի որդիքն»[51], հիշատակությունը: Այս կարևորագույն տիրույթի ստիպողական վաճառքն անկասկած իրականացվել է «Շահնշահյան տունը» գլխավորող Իվանեի նախաձեռնությամբ ու եղբայրների համաձայնությամբ: Ինչպես Մրենի վաճառքի, այնպես էլ այս դեպքում, գնորդն առևտրավաշխառուական կապիտալի ներկայացուցիչ էր, բայց ոչ թե հայ, այլ՝ հայկական իրականության հետ սերտ կապեր ունեցող պարսիկ: Դա խորասանյան ծագմամբ ամենազոր Շամս ադ-Դին Մուհամմեդ*

---

[46] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 421:*

[47] Картлис цховреба, с. *373.*

[48] *Նույն տեղում, էջ 369, Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 158-159: Սահմադինի մասին տե՛ս* А. Г. М а р г а р я н. К вопросу о личности и деятельности «некоего Шадина».– Кавказ и Византия, вып. 3, 1987, с. 64–72:

[49] *Վ ա ր դ ա ն վ ա ր դ ա պ ե տ, էջ 158-159:*

[50] *Հայագիտական հետազոտություններ, պրակ Ա, Երևան, 1974, էջ 41-42:*

[51] *Ս ա մ վ ե լ Ա ն ե ց ի, էջ 161:*

Ջուվեյնին էր՝ Իլխանության առաջին (մեծ) վեզիրն ու ֆինանսական դիվանի ղեկավարը[52]: Այդ երկու կարևորագույն պաշտոնները համատեղելու բերումով նա կոչվում էր Սահիբ Դիվան, որին նաև առևտրատնտեսական գործունեությամբ զբաղվելու պատճառով հավելվում էր խոջա մակդիրը: Սահիբ Դիվանը նախքան 1263 թ. այդ պաշտոններն ստանձնելը առևտրական ու այլ գործարքներով կուտակել էր մեծ հարստություն, որը հետագայում պաշտոնեական դիրքի չարաշահմամբ բազմապատկեց[53]:

Ի տարբերություն «Շահնշահյան տան», Օրբելյան իշխանական տոհմը չնայած 1260–1262 թթ. Սմբատ Օրբելյանի եղբայրներ Իվանեի ու Փախթադոլայի անժամանակ մահվան, եղբորորդի Բուրթելի՝ մարտում սպանվելուն և մոր՝ Ասփայի, վախճանվելուն, պահպանում էր իր տնտեսական ու քաղաքական կարողությունը: Սմբատը ոչ միայն որևէ սեփականություն չէր վաճառում, այլև շարունակում էր շինարարական ու նվիրատվական գործունեությունը: Նա «սիրեցեալ լինէր յաչս Հուլաւու դանին և կացուցեալ ի վերայ բազում գործոց իւրոց»[54]: Այսպես, օրինակ, նա մասնակցում է Դառն դաշտ կոչվող վայրում Հուլավուի ամառանոցային նստավայրի կառուցմանը՝ Բասենից կազմակերպելով շինարարությանն անհրաժեշտ եղենի և մայրի փայտանյութի մատակարարումը[55]: 1265 թ. Հուլավուի մահանալուց հետո նրան փոխարինած և հայկական սկզբնաղբյուրների կողմից դրական բնութագրված[56] որդու՝ Աբաղայի (1265–1282) օրոք ևս, մինչև վախճանվելը, Սմբատ Օրբելյանը կարողացավ պահպանել իր դիրքերը: Սակայն նրա մրցակից Սադուն Մահկանաբերդցին գնալով ավելի ու ավելի էր հզորանում՝ աստիճանաբար սասանելով դրանք: Ընդ որում, որքան ուշագրավ, նույնքան էլ օրինաչափ է, որ միմյանց արժանի այդ մրցակիցները Գյուրջիստանի վիլայեթի, այդ թվում հատկապես Զաքարյան Հայաստանի ավագանու շարքերում առաջնության համար մղած պայքարում ներքինի փոխարեն արտաքին հենարան էին փնտրում՝ ի դեմս Իլխանության առաջին դեմքերի՝ Աբաղայի, Սահիբ Դիվանի ու Արղունի: Այլ կերպ չէր էլ կարող լինել, որովհետև նախ երկրում նման հենարան չկար և ապա՝ մոնղոլները նման բան երբեք թույլ չէին տա:

Սմբատ Օրբելյանի և Սադուն Մահկանաբերդցու մրցակցությունում կարևոր տեղ ուներ «Ավագյան տան» տիրույթների տնօրինման հարցը: Ինչպես վերը

---

[52] *Անիի վաճառքի հետ կապված մանրամասները տե՛ս* Ա. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 211,* Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. *11-14-րդ դարերում հայ-իրանական կապերի պատմությունից (Սահիբ դիվան Շամս ադ-Դին Ջուվեյնին և Հայաստանը).– Արևելագիտական ժողովածու, հ. V, Երևան, 2004, էջ 112-114:*

[53] *Իլխանության արքունիքում մշտական դավադրությունների, խարդավանքների, փոխադարձ մատնությունների ու պաշտոնեական դիրքի չարաշահման պատճառով, 24 առաջին վեզիրներից 23-ը, այդ թվում՝ Սահիբ Դիվանը, մահապատժի ենթարկվեցին, իսկ մեկը հանկարծամահ լինելով փրկվեց մահապատժից: Նրանց անբավ ունեցվածքը բռնագրավվում էր հօգուտ պետության. տե՛ս* И. П. П е т р у ш е в с к и й. Иран и Азербайджан под властью Хулагидов (1256–1353).– Татаро-монголы в Азии и Европе *(сборник статей).* М., 1970, с. 232.

[54] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 414:*

[55] *Նույն տեղում, էջ 415:*

[56] *Տե՛ս, օրինակ, նույն տեղում, էջ 419,* Գ ր ի գ ո ր Ա կ ն ե ր ց ի, *էջ 52, Դիվան հայ վիմագրության, պրակ III, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան, Երևան, 1967, էջ 74 և այլն:*

նշվեց, մոնղոլները Գոնցայից ազատվեցին, առաջին հերթին, ելնելով սեփական շահերից, սակայն դրանում իր լուման ունեցավ նաև Սմբատը: Այդ են վկայում Ստեփանոս Օրբելյանի խոսքերն առ այն, որ նա «խորհի այլ իշխանացն և տան սպանանել ի ծովամիջի (Սևանա լճի – Ա. Շ.) զԳոնցայն, հրամանաւ Հուլաւու դանին»[57]: Սմբատի հեռահար նպատակը Գոնցային ասպարեզից հեռացնելով իր նախկին սյուզերենների իշխանությանը տիրանալն էր: Ակամա դա է վկայում Ստեփանոս Օրբելյանը, որը ցանկալին իբրև իրականություն ներկայացնելով, պնդում է, թե իբր «Սմբատայ հայրագիր լեալ տանն Աւագին» և որ Գոնցայի սպանությունից հետո «ինքն իշխէր ամենայն իշխանութեանց Աւագին» և «տայ... զԽոշաքն ի կնութիւն մեծ Խոջային սահիպ դիւանին»[58]: Հայ պատմագիտության մեջ Սյունյաց պատմիչի այս պնդումներն իրավացիորեն վիճարկվել են[59]: Բանն այն է, որ, ինչպես արդեն տեսանք, «Ավագյան տան» հայրագիրը, այսինքն՝ խնամակալը, Սադուն Մահկանաբերդցին էր: Բացի այդ, մոնղոլները չէին հանդուրժի Սմբատ Օրբելյանի նպատակի իրականացումը, քանի որ Գյուրջիստանի վիլայեթում ի հայտ կգար մի հզոր իշխանություն, ինչը կխախտեր այնտեղ իրենց իսկ սահմանած ուժերի հավասարակշռությունը: Դա չէր հանդուրժի նաև Սադուն Մահկանաբերդցին: Ուստի պետք է հաղթեր նա, քանզի այս հարցում նրա և մոնղոլների շահերը համընկնում էին: Հենց նրա և ոչ թե Սմբատի ջանքերով է, ինչպես պնդում է Ստեփանոս Օրբելյանը, որ Խոշաքը 1269 թ. ամուսնացավ ամենազոր Սահիբ Դիվանի հետ: Այս ամուսնությունը երկու կողմերի՝ Սահիբ Դիվանի ու Խոշաքի և միջնորդի՝ Սադուն Մահկանաբերդցու մանրակրկիտ հաշվարկների արդյունք գործարք էր: Այն Խոշաքին հնարավորություն տվեց ի չիք դարձնելու իր հայրական տիրույթները սեփականելու Ուլու Դավթի ու Սմբատ Օրբելյանի, ինչու չէ նաև «Շահնշահյան տան», հավակնությունները և ամենազոր Սահիբ Դիվանի նման պաշտպան ունենալով՝ վերականգնելու «Ավագյան տանե գերիշխող դիրքերը: Դա է փաստում թեկուզ այն հանգամանքը, որ նա ամուսնությունից մեկ տարի անց՝ 1270 թ., Զագավանից ժողովի հրավիրումը նախաձեռնած հայ ավագանիների շարքում հիշատակվում է առաջինը՝ նախորդելով Պռոշ Խաղբակյանին, Սադուն Մահկանաբերդցուն և Սմբատ Օրբելյանին[60]: Այս անունների կողքին Զաքարյան իշխանական տան մյուս ճյուղերի՝ «Շահնշահյան տան», Վահրամյանների ու Թմոգվեցիների ներկայացուցիչների անունների բացակայությունը[61] փաստում է, որ նրանք այնքան էին թուլացել, որ երկրի քաղաքական կյանքում լուրջ դերակատարություն չունեին: Այսպիսով՝ Խոշաքի հաշվենկատ ամուսնության շնորհիվ «Ավագյան տան» դիրքերն ուժեղացան: Սակայն, ինչպես ցույց տվեց

---

[57] *Ս տ ե փ ա ն ո ս Օ ր բ ե լ յ ա ն, էջ 418:*

[58] *Նույն տեղում:*

[59] *Ա շ ո տ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 214, ծան. 2, Լ. Հ. Բ ա բ ա յ ա ն. Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIV դարերում, Երևան, 1964, էջ 277, Հ. Մ ա ր գ ա ր յ ա ն. 11-14-րդ դարերում հայ-իրանական կապերի պատմությունից..., էջ 116:*

[60] *Կանոնագիրք Հայոց, խմբագրեց Արսեն Ղլտճյան, Թիֆլիս, 1913, էջ 180:*

[61] *Զագավանից ժողովի մասին տե՛ս Գ. Հ ո վ ս ե փ յ ա ն. Զագավանից ժողովը.– «Շողակաթ» (Էջմիածին), 1913, էջ 23-27:*

ապագան, դա ժամանակավոր էր, քանի որ վերը նշված պատճառներով Զաքարյան իշխանական տան դիրքերն անշրջելիորեն սասանվել էին:

ЗАХАРИДСКАЯ АРМЕНИЯ В ПЕРВЫЙ ПЕРИОД ИЛЬХАНСТВА

АРТАШЕС ШАХНАЗАРЯН

Р е з ю м е

Брат великого монгольского хана Манту-Улау, захватив весь Иран, создал новое монгольское государство, которое именовалось Ильханством и официально было признано в 1261 г. В это огромное государство входила и Захаридская Армения, включенная в вилайет Гюрджистан. В 1258–1260 гг. Улау вел ряд войн с целью захвата Аббасидского халифата, всего северного Междуречья, Ассирии. В них вынуждены были принимать участие и князья Захаридской Армении со своей конницей. В первый период Ильханства ослабли позиции княжеского рода Захаридов, до той поры главенствующего в Армении. Главными причинами этого был экономический упадок рода Захаридов, вследствие жестокой налоговой политики монголов и усиление монголами – в противовес Захаридам – других княжеских родов.

THE ZAKARYANS' ARMENIA IN THE FIRST PERIOD OF ILKHANATE

ARTASHES SHAHNAZARYAN

S u m m a r y

Great Mongolian khan Mantu-Ulau's brother captured the whole Iran, created new Mongolian state, which was named Ilkhanate and was officially recognized in 1261. The Zakaryans' Armenia, included in the vilayet of Gyurjistan, was also in that huge state. In 1258–1260 Ulau waged a number of wars with the purpose of conquering the Abbasid Caliphate, all northern Mesopotamia, Assyria. The princes of the Zakaryans' Armenia also had to take part in those wars with their cavalry. In the first period of Ilkhanate the Zakaryans' princely family's positions, having been predominant in Armenia up to that time, weakened. The main reason of that was the economic decline of the Zakaryans' family as a result of the Mongols' cruel taxation policy and strengthening by the Mongols other princely families to counterbalance the Zakaryans.